մաչէն Սահաթի տուն, որ կոչի Ռաթուշ, որ
30 ունի մեծ սահաթ վերեւն. եւ ամէն սահաթի՝
վոզ հարկանեն. ուր եւ դատարան է Լէհաց եւ
Հայոցն: Կան եկեղեցիք եւ քլաշթօրնի, որ են
վանք, արանց եւ կանանց՝ մեծամեծ եւ վի-
մաշէն, առանց գմբէթի:

ԼԵԶՈՒ ՀԱՑՈՑ, ԱՆԵՑԻՒՔ

35 Եւ Լովայ Հայքն հայնակ չի գիտեն, այլ
լէհնակ եւ խրչակնակ զրուցեն, որ է թաթրի
լեզու: Եւ ասին թէ յԱնիու եկած են տեղացս
Հայք. եւ զի ըստ պատմագրաց երկու բաժին
եղեալ՝ մինն եկեալ ի Քաֆայ եւ Ախքէրման,
40 որ զեռ կան ի Սուլումանատար եւ հայնակ
զրուցեն. եւ Անկուրիայ եւ անտի ի Լէհ: Եւ
այս չէ նախատինք, եթէ են Անիցիք. զի զքա-
զաքն եւ զմնացեալս անիծեց եւ զելեալսն օր-
հնեաց, որպէս ի հինն զՍոդոմ եւ զԳոմոր ա-
45 նիծեց եւ զՂովտ իւրովքն փրկեց. նոյնպէս
զԱնի չար բնակիչք կործանեց եւ զբարիսն եհան

35 լովա: — 43 անիցից:

Սդանիսլաւ). հմմտ. Պատմութիւն հայկական տպագրութեան սկզբնաւորութենէն մինչ առ մեզ. Վենետիկ 1895, էջ 64—67. Հ. Ղ. Ալիշան, Կամենից, 171—172. Դեր. Ստեփանոս Դիւվէր Ադոնց, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի. Մասն Բ., հատոր Բ., Վենետիկ 1802, էջ 135—136. Հ. Մ. Բժշկեան, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ 1830, էջ 99—100: Մեր յառաջբերութիւնը եղած է Ադոնցէն, լրացուած «Պատմութենէն»:

Բժշկեան (էջ 100) կը գրէ թէ «ի 1705 տպագրեցին Սաղմոս մի թաթարերէն», նո՞յն տպարանին մէջ, նո՞յն գրերով: